ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Արաբական խալիֆայության տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովուրդը իր քաղաքացիական իրավունքներով հավասար չէր իշխող մահմեդական զանգվածին և մտնում էր այն խմբի մեջ, որը մահմեդական իրավագիտության մեջ կոչվում էր զիմմի[1] *(հովանավորյալ)։*

Մահմեդական իրավագիտության մեջ կան զիմմիների իրավական վիճակը որոշող ձևակերպումներ, որոնց ուսումնասիրությունը կօգնի որոշելու նաև հայ ժողովրդի իրավական վիճակը VIII դ. և IX դ. առաջին կեսում։ Այսուհանդերձ, չի կարելի անտեսել այն փաստը, որ զիմմիների մասին եղած իրավական ձևակերպումները վերաբերում են առաջին հերթին Եգիպտոսի, Ասորիքի ու Միջագետքի ոչ մահմեդականներին, իսկ վերջիններիս և հայ ժողովրդի իրավական վիճակի միջև որոշակի տարբերություն կար, որը և պիտի նկատի առնել քննվող ժամանակաշրջանում հայ ժողովրդի իրավական վիճակն ուսումնասիրելիս։

Տեսականորեն զիմմի էին համարվում միայն ս. Գրքի (Հին և Նոր Կտակարաններ) ժողովուրդը (اهل الكتاب), այսինքն՝ հրեաներն ու քրիստոնյաները, բայց ժամանակի ընթացքում ինքնաբերաբար այս խմբի մեջ են մտցվել նաև զրադաշտականները[2]*, սաբիները (Խառանի հեթանոսները) և սամարացիները*[3]*։ Սակայն, քանի որ այս ժողովուրդների մեջ ամենաբազմամարդը քրիստոնյաներն ու հրեաներն էին, ապա զիմմիների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումները կարող ենք դիտել որպես մեծ մասամբ վերջիններիս վերաբերող նյութեր։*

Զիմմիների իրավական վիճակը[4] *որոշելու համար մահմեդական իրավագետները հենվում էին Ղուրանի հետևյալ խոսքերի վրա. «Կռվեցեք ս. Գրքի ժողովրդից այն մարդկանց դեմ, որոնք չեն հավատում Աստծուն, վերջին դատաստանի օրվան, արգելված չեն համարում այն, ինչ Աստված և նրա մարգարեն արգելել են և չեն դավանում ճշմարիտ կրոնը, մինչև որ իրենց ձեռքով*

---

1 *Քանի որ հայ ժողովուրդը մտնում էր զիմմի կոչված խմբի մեջ, մենք երբեմն մանրամասն ենք քննել առհասարակ զիմմիների իրավական վիճակը։*

2 *Վերջիններս բառիս բուն իմաստով զիմմի չէին և որոշ հարցերում հրեաներից ու քրիստոնյաներից պակաս իրավունքներ ունեին։*

3 *Սամարացիները հրեաների և այլ ժողովուրդների (բաբելացիներ, արամեացիներ) խառնուրդ էին։ Հին հրեական կրոնը ընդունելով հանդերձ, նրանք ինքնուրույն համայնք էին կազմում և ունեին իրենց տաճարները։ Արաբական նվաճումից հետո նրանք ձուլվեցին արաբների հետ։*

4 *Միջնադարյան հասարակության մեջ կրոնական սկզբունքի վրա հենվող խտրականությունը խալիֆայության մեջ ուժեղ էր արտահայտվում։ Տեսականորեն ոչ մահմեդական հպատակը գրեթե իրավազուրկ էր* (C. Cahen, Dhimma, Enc. de l'Islam. Leyde—Paris, 1956, II, p. 234—238).

և հնազանդ վիճակում վճարեն գլխահարկը (ջիզիա)»[5]։ Ահա այս սկզբունքն է, որ զարգացրեց մահմեդական իրավագիտությունը, ժամանակի ընթացքում ստեղծելով մի ամբողջ տեսություն։ Նվաճված ոչ մահմեդական և առաջին հերթին քրիստոնյա ժողովուրդների իրավական վիճակը ձևակերպվեց մասամբ առաջին խալիֆաների օրոք, երբ նվաճվեցին քրիստոնյա հոծ ազգաբնակչություն ունեցող Ասորիքը, Եգիպտոսը և Միջագետքը։ Այսուհանդերձ, այս հարցը վերջնականորեն ձևակերպվեց Օմայանների օրոք (661—750), խալիֆայության՝ որպես պետություն, ձևավորվելուն զուգընթաց։

Քրիստոնյաների (نصارى) իրավական վիճակը քննված է մի շարք մահմեդական իրավագետների[6] և պատմիչների աշխատություններում։ Մասնավորապես հայտնի է Օմար Ա խալիֆային (634—644) վերագրվող այն հրովարտակը (պայմանագիր)[7], ուր որոշված են զիմմիների պարտավորությունները։ Սակայն այդ պայմանագիրը կամ նման այլ փաստաթղթերը չեն խոսում զիմմիների իրավական վիճակը բնութագրող բոլոր հարցերի մասին։ Բացի այդ, հիշյալ պայմանագրի մեզ հասած բնագիրը մի քիչ ուշ է խմբագրվել և ավելի հավաստի են հենց VII դ. մեզ հասած պայմանագրերը, ինչպես նաև իրավագիտական մատյանները։ Այս հարցի ուսումնասիրման համար կարևոր աղբյուրներ են իրավագետներ Աբու Յուսուֆի (VII դ.) «Հարկերի մատյանը» և Մավարդիի (մահ. 1056 թ.) «Պետական կանոնների մատյանը», իսկ պատմիչներից Բալազուրիի «Երկրների նվաճման գիրքը» և այլն։

Մահմեդական իրավունքը խալիֆայության հպատակներին բաժանում էր երեք խմբի՝ մահմեդականներ, զիմմիներ[8], ստրուկներ։ Մահմեդականություն չընդունողները կամ ստրկացվում էին, կամ համարվում զիմմի։

Ըստ մահմեդական իրավունքի՝ մահմեդական համայնքի նվաճածը նրանն է, իսկ տեղական բնակչությունը միայն մահմեդական դառնալով կարող էր հավասարվել նվաճողի հետ։ Ինչ վերաբերում է մահմեդականություն չընդունողին, ապա նա անձի և ունեցվածքի ապահովություն կարող էր ձեռք բերել գլխահարկ վճարելու պայմանով խալիֆայության հետ պայմանագիր կնքելու միջոցով[9]։ Ապահովության գիրը[10] կամ պայմանագիրը մահմեդական իշխողները կարող էին տալ թե՛ խալիֆայությանը հպատակ ոչ մահմեդականներին, թե՛ այլ պետության հպատակին, որն ապաստանում էր խալիֆայու-

---

5 Ղուրան, թ. 129։

6 Օմայանների օրոք ձևավորվեցին Մուհամմադ մարգարեի մասին հազարավոր ավանդություններ (հադիս), իսկ Աբբասյանների օրոք կազմավորվեց իրավագիտությունը (ֆիկհ), որն ունեցավ չորս դպրոցներ՝ հանիֆի, մալիքի, շաֆիի և հանբալի։

7 Н. Медников, Палестина от завоевания ее арабами до крестовых походов («Палестинский сборник», XVII, СПб. 1893. I, стр. 538—613).

8 Զիմմիների և մանավանդ քրիստոնյաների իրավական վիճակով շատերն են զբաղվել. տե՛ս В. Гиргас, Права христиан на Востоке по мусульманским законам, СПб, 1865; R. J. H. Gottheil, Dhimmis and Moslems in Egypt, Chicago, 1908; A. Fattal, Le statut legal des non-musulmans en pays d'Islam, Beyrouth, 1958; A. S. Tritton' The Caliphs and their non muslim subjects, London, 1970.

9 Ոչ մահմեդականներին պայմանագիր տալու սովորությունը գալիս է Մուհամմադից։ Հայտնի է, որ նա պայմանագիր տվեց Նաշրանի (Եմեն) քրիստոնյա բնակիչներին, երաշխավորելով նրանց անձի և ունեցվածքի ապահովությունը (A. Fattal, նշվ. աշխ., p. 22—26).

10 В. Гиргас, նշվ. աշխ., էջ 15—16։ Լեո, երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 273—279։

թյունում։ Նման պայմանագիրը պետք է ընդունելի լիներ բոլոր մահմեդականների համար։ Պայմանագիր ունեցող քրիստոնյաներն ապստամբության դեպքում կորցնում էին ամեն ինչ[11]։

Զիմմիների իրավական վիճակի մասին եղած տեղեկությունները վերաբերում են թե՛ նրանց վերնախավին (հողատեր իշխաններ, բարձրաստիճան հոգևորականություն և այլն), թե՛ հասարակ ժողովրդին (քաղաքային բնակչություն և գյուղացիություն)[12]։ Մահմեդական իրավագիտության համաձայն՝ զիմմիները պետական պաշտոններ վարելու իրավունք չունեին։ Դա հիմնականում մահմեդական իշխող տարրի ցանկությունն էր և իրագործվում էր ըստ հնարավորության։ Այնուամենայնիվ, խալիֆայության սկզբնական շրջանում թե՛ Եգիպտոսի ղպտիները, թե՛ Միջագետքի ու Ասորիքի ասորիները[13] լինում էին գլխավոր հարկահաններ, գավառների կառավարիչներ, խալիֆաների քարտուղարներ, բժիշկներ և այլն։ Այս առումով առանձնապես ուշագրավ է Հայաստանում Հայոց իշխանի (بطريق صاحب الارمن կամ بطريق) և ապա իշխաձաց իշխանի (بطريق البطارقة) գոյության փաստը[14], որը բացառիկ երևույթ էր ամբողջ խալիֆայության պատմության մեջ։ Սակայն Աբբասյան խալիֆաները ձգտում էին նվազեցնել քրիստոնյա իշխանավորների թիվը և թեև նրանց լրիվ չհաջողվեց, այդուհանդերձ այդ քաղաքականությունը որոշ հաջողություններ ունեցավ։ Զիմմիները չկարողացան երբևէ որևէ նահանգի կառավարչի (ոստիկանի) պաշտոն ձեռք բերել կամ արքունիքում հասնել բարձր դիրքի[15]։

Արևելագիտության մեջ անորոշ է զիմմիի սեփականատիրական իրավունքի հարցը վաղ միջնադարում[16]։ Մահմեդական իրավագիտությունը խոսում է միայն հողի նկատմամբ մահմեդականի սեփականատիրական իրավունքների մասին, նշելով, որ սեփական (մուլք, միլք) կարող են համարվել հետևյալ հողերը. 1. Այն հողերը, որոնց տերերը նախքան արաբական նվաճումները ընդունել էին մահմեդականություն։ 2. Սպանված կամ փախած տեղացի հողատերերի կալվածքները, որոնք խալիֆայության կողմից ի սեփականություն տրված էին որևէ մահմեդականի։ 3. Մահմեդականի մշակած խոպան, անտեր, մեռած (موات) հողերը։

Այս հողերը միլք (մուլք) էին և կարող էին վաճառվել, նվիրվել կամ գրավ դրվել։

Նման դեպքերում ուղղակիորեն չի խոսվում զիմմիի սեփականատիրական իրավունքների գոյության կամ չգոյության մասին, սակայն կան կողմ-

---

11 „Maverdii constitutiones politicae, Bonn, 1853, p. 252.

12 Abu Yusuf, Kitab al-kharadj, Bulaq, 1302 (1884), p. 81.

13 H. Lammens, La Syrie, I, Beyrouth, 1921, p. 112—117.

14 A. Fattal, Նշվ. աշխ., էջ 297—298։

15 Թեև Աբբասյանների արքունիքում քրիստոնյա վեզիր չի եղել, բայց Շիրազի Բուիների և Եգիպտոսի Ֆաթիմյանների մոտ եղան, օրինակ՝ Վահրամ Պահլավունին, M. Canard, Un vizir chrétien a l'epoque Fatimide, l'Armenien Bahram („Ann. de l'Inst. d'Et. Or.»), Alger, 1954, № XII).

16 Ուշ միջնադարում, զիմմիի սեփականատիրական իրավունքները ուսումնասիրողների մոտ կասկած չեն հարուցում (И. П. Петрушевский, Ислам в Иране в VII—XV вв., Л., 1966, стр. 184).

նակի տվյալներ, որոնց վկայությամբ զիմմին կարող էր ունենալ հողային սեփականություն, սակայն այն տարբերությամբ, որ եթե մահմեդականը սեփական հողի համար միայն տասանորդ (ուշր) էր վճարում, ապա զիմմին պարտավոր էր հողահարկ (խարաջ) վճարել։ Եվ որովհետև մահմեդական իրավագետները սեփականության հարցը շոշափում են միայն հարկերի մասին խոսելիս, ապա ստացվում է այն տպավորությունը, որ տասանորդային (ուշրային) հողերն են միայն սեփական կալվածքներ, իսկ հողահարկային (խարաջային) հողերը կամ պետական են, կամ տիրության իրավունքով են հողատիրոջը պատկանում[17]։ Այսպես, օրինակ, Աբու Յուսուֆը ուղղակիորեն նշում է, որ պայմանագիր կնքելու դեպքում զիմմին կարող է հողային սեփականություն ունենալ «և գա նրանց միլքն (մուլքն) է, կժառանգեն, կվաճառեն այն և դրանից կվերցվի հողահարկ»[18]։ Նա տարբեր հողերի համար վճարած հարկերի մասին խոսելիս հստակորեն ասում է, որ երբ զիմմին գնում է մահմեդականին պատկանող հողը (որի համար ուշր է վճարվում), ապա պարտավոր է հողահարկ (խարաջ) վճարել և հակառակը, երբ նա իր խարաջային հողը վաճառում է մահմեդականին, ապա այն դառնում է տասանորդային (ուշրային) հող[19]։ Ուրեմն, զիմմիի և մահմեդականի իրավունքների տարբերությունը այն էր, որ նրանք տարբեր հարկեր էին վճարում, բայց նույն սեփականատիրական իրավունքները[20] կարող էին ունենալ։

Իհարկե զիմմիների մեջ իրոք կար հողատերերի մի մեծ զանգված (Ասորիքում և այլուր), որը սոսկ տիրության իրավունք ուներ իր հողերի նկատմամբ։ Այդ հողերը համարվում էին վակֆ (անշարժ գույք) ու գտնվում պետության տրամադրության տակ։

Նվաճված երկրների այն հողերը, որոնք խալիֆայությունը չէր պետականացնում, այսինքն՝ ավար (غنيمة) չէին, մահմեդական իրավագիտության մեջ կոչվում էին «ֆայ» (فيء) և նախկին տերերին էին մնում պայմանագրով[21]։ Դրանք երկու տեսակ էին. 1. հողեր, որոնց նախկին տերերը այն պահում էին տիրության իրավունքով։ Սրանք, ասվեց, վակֆ հողեր էին և հողի տերը այն վաճառելու կամ գրավ դնելու իրավունք չուներ։ 2. Հողեր, որոնց տերերը մնում էին սեփականատերեր և դրանք վաճառելու, նվիրելու կամ գրավ դնելու իրավունք ունեին[22]։

Հողային սեփականության իրավունք ունեցող զիմմիներն էին առաջին հերթին հայ և վրաց նախարարները, իսկ ինչ վերաբերում է Ասորիքի ու Միջագետքի ասորի և Եգիպտոսի ղպտի հողատերերին, ապա նրանք հողատիրական պակաս իրավունքներ ունեին։

---

[17] L. W. C. Vanden Berg. Principes du droit musulman, selon les rites d'Abou Hanifah et de Chafii, Alger, 1896, p. 119.

[18] Abu Yusuf, p. 36.

[19] Նույն տեղում, էջ 69։

[20] Հանիֆիները նաև ընդունում էին, որ զիմմին կարող էր մեռած հողը մշակելով դառնալ սեփականատեր (A. Fattal, նշվ. աշխ., էջ 298).

[21] Th. W. Juynboll, „Fay" (Shorter Enc. of Islam, Leyden, 1959, p. 95—96).

[22] Maverdi, p. 238—239.

Հողատիրական ժառանգական իրավունքների պահպանման համար հայ նախարարները խալիֆայությունից ստանում էին պայմանագրեր[23]։ Դրանցից են Հայաստանի խոշոր հողատերերին Հարիր իբն Մասլամայի տված պայմանագրերը[24] և VIII դ. սկզբին հայ նախարարներին տրված պայմանագրերը[25]։

Շնորհիվ հողատիրական իրավունքների պահպանման, հայ նախարարները (قطارقة պատրիկներ) կարողացան իրենց ձեռքում պահել երկրի կառավարման մեջ այնպիսի կարևոր պաշտոններ, ինչպիսիք էին Հայոց իշխանի և հայոց սպարապետության գործակալությունները։ Իհարկե եղան ժամանակներ (VIII դ. երկրորդ կես), երբ Աբբասյան խալիֆաները ձգտում էին անտեսել հայ ավատատերերի հողատիրական պայմանագրերը, սակայն վերջիններս ունենալով հողատիրական ժառանգական իրավունքներ, կարողացան պահպանել Հայաստանի ինքնավարության վերջին մնացորդները։ Ասորիները և ղպտիները ևս կարող էին վարչական որոշ մանր պաշտոններ վարել[26], բայց իրենց երկրների կառավարման մեջ աննշան մասնակցություն ունեին։

Հողատիրական իրավունքների հետ սերտ կապ ունի նաև զինվորական ծառայությունը, մանավանդ հեծելազորի առկայությունը, քանի որ վերջինս բաղկացած էր մանր հողատերերից։

Ոչ մահմեդականների զինվորական ծառայության մասին մահմեդական իրավագիտության մեջ տարբեր կարծիքներ կան։ Ըստ մալիքիների և հանբալիների՝ զիմմին իրավունք չուներ բանակում զենք կրելու, սակայն հանիֆիները և շաֆիիները դա թույլատրելի էին համարում[27]։ Զիմմիներին առաջին խալիֆաների տված պայմանագրերում հիշվում է, որ վերջիններս պետք է օգնեն մահմեդական ռազմիկներին՝ հյուրընկալելն, ճանապարհ ցույց տան կամ ազդանշանային կրակ վառեն և այլն։ Սակայն նրանց զինվորական ծառայությունը սկզբունքորեն պարտադիր և նույնիսկ ցանկալի չէր, քանի որ նրանք, որպես հովանավորյալներ, գլխահարկի փոխարեն վայելում էին խալիֆայության պաշտպանությունը։

Վերոհիշյալը վերաբերում է առաջին հերթին Եգիպտոսի, Ասորիքի ու Վերին Միջագետքի այն զիմմի ազգաբնակչությանը, որը, թեև այս կամ այն չափով կռվում էր մահմեդական զորքի շարքերում, բայց չուներ սեփական (ասորական կամ ղպտական) գնդեր, իսկ Արմինիայում (Հայաստան, Վրաստան, Դարբանտ և այլն) զինվորական ծառայությունը պարտադիր էր։

Հայոց այրուձիի մասին առաջին անգամ հիշվում է 652 թ. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի միջև կնքված դաշնագրում, ըստ որի հայկական 15 հազարանոց հեծելազորը պետք է պարենամթերք (և այլ պիտույքներ) ստանար հայ նախարարներից՝ խալիֆայությանը

---

23 Այս մասին մանրամասն տես Ա. Տեր-Ղևոնդյան, Հայ նախարարների հողատիրական իրավունքները 7—9-րդ դարերում («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 4, էջ 20—35)։

24 „Liber expugnationis regionum auctore al-Beladsori", Lugd. Bat., 1866, p. 199—200.

25 «Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 31, 35—36։

26 A. Atiyah, A History of Eastern Christianity, London, 1968, p. 268—271; A. S. Tritton, նշվ. աշխ., էջ 18—23։

27 Fattal, նշվ. աշխ., էջ 232—233։

վճարվելիք հարկի դիմաց։ «Եւ հեծեալ կալէք յաշխարհէն ԺԵ հազար, և հաց յաշխարհէն տուք և ես ի սակն արքունի անգարեմ և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ, բայց այլ ուր և հրամայեմ՝ պատրաստ լիցին ի գործ»[28]։

Սակայն հայկական այրուձիի իրավական վիճակը վերջնականապես ձևակերպվեց VIII դ. սկզբին։ Ըստ խալիֆայության հետ կնքված պայմանագրերի, հայ նախարարները պետք է պահեին 15 հազարանոց այրուձի, որի համար խալիֆայական գանձարանից տարեկան ստանալու էին հարյուր հազար դահեկան[29]։ Այս ռոճիկը տրվում էր «զնախարարացն Հայոց և նոցին հեծելոցն զխածիթայսն»[30] այրուձին պատրաստ վիճակում պահելու համար։

Դժբախտաբար մեզ չեն հասել հայ նախարարների հետ խալիֆայության կնքած պայմանագրերի բնագրերը, սակայն ունենք Դարբանտի հետ կնքված պայմանագիր, ուր խոսվում է պատերազմին մասնակցելու պայմանների մասին[31]։

Հոգևորականության վիճակը նույնպես որոշվում էր պայմանագրերով։ Վերջինս տեսականորեն գլխահարկից ազատ էր համարվում, բայց, ըստ էության, ստիպված էր շատ հաճախ նվերներով գոհացնել արաբ կառավարիչներին։ Այսպես, օրինակ, վանականները տեսականորեն ազատ էին գլխահարկից, քանի որ համարվում էին ընչազուրկներ, սակայն, եթե պարզվեր, որ ունեն որևէ հասույթ, ըստ Արու Յուսուֆի, նրանցից գլխահարկ էր գանձվում[32]։

Սա հարկահաններին առիթ էր տալիս մտնելու հայկական հարուստ վանքերը և կողոպտելու, պատճառաբանելով, որ վանականներն ի վիճակի են գլխահարկ վճարելու։ Այսպես է եղել օրինակ, Բագավանի ս. Գրիգոր[33], Վասպուրականի Վարագա վանքերում[34]։

Խալիֆայության մեջ ոչ մահմեդական բնակչությունն ուներ իր կրոնական համայնքները[35], ընդ որում՝ քրիստոնյաներն ունեին իրենց պատրիարքները (կամ կաթողիկոսները), իսկ տեղերում՝ եպիսկոպոսները, հրեաներն ունեին իրենց ռաբբիները, իսկ զրադաշտականները՝ մոգպետը։ Քրիստոնյա հոգևոր պետերն էին՝ Եգիպտոսում՝ ղպտիների պատրիարքը, Պաղեստինում՝ Երուսաղեմի մելքիտ պատրիարքը, Լիբանանում՝ մարոնիների պատրիարքը, Ասորիքում ու Վերին Միջագետքում՝ Անտիոքի մելքիտ պատրիարքը և հակոբիկների պատրիարքը, Վերին Միջագետքում՝ նեստորականների պատրիարքը, Հայաստանում՝ Հայոց կաթողիկոսը (جاثليق ջաթղիկ)[36], իսկ Վրաստանում՝ Վրաց կաթողիկոսը։ Այս կրոնական պետերը[37] համարվում էին ոչ մահմեդական համայնք-

---

28 «Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», Երևան, 1939, էջ 140—141։

29 Հ ա ն դ, էջ 128։

30 Նույն տեղում, էջ 113։

31 T a b a r i, Tarikh, Le Caire, 1963, IV, p. 157.

32 A b u Y u s u f, p. 70.

33 «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղեմ, 1867, էջ 139—140։

34 «Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 214։

35 P h. H i t t i, History of the Arabs, London, 1958, p. 233—234, 352—356.

36 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն», Մ., 1860, էջ 237։

37 Իհարկե կային նաև այլ քրիստոնյա կրոնապետեր, ինչպես օրինակ, Իսպանիայում և այլուր։

ների ներկայացուցիչներ խալիֆայության առջև, սակայն Հայաստանում (և Վրաստանում) դրությունը որոշ չափով այլ էր, քանի որ Հայոց իշխանը (նաև Վրաց իշխանը) կարևոր հեղինակություն էր։ Լինելով իրենց համայնքի միակ ներկայացուցիչները, նեստորական կաթողիկոսը, մելքիտ պատրիարքը, Եգիպտոսի ղպտիների պատրիարքը և մյուսները ավելի մեծ հեղինակություն էին վայելում խալիֆայության մեջ, քան, օրինակ, Հայոց կաթողիկոսը, սակայն, միևնույն ժամանակ, առաջինների ընտրության դեպքում միջամտում էին խալիֆան և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ։ Այս բանը նկատվում էր մանավանդ Աբբասյանների օրոք, երբ խալիֆայական հրովարտակով էր հաստատվում նեստորական կաթողիկոսի ընտրությունը[38]։ Սակայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցում չունենք միջամտության փաստեր։ Միակ դեպքը, որ մեզ հայտնի է, Սիոն կաթողիկոսի (767—775) ընտրությունն է, որը կատարվեց Սուլայման ոստիկանի առաջարկով։ Սակայն այս փաստը չենք կարող ուղղակի միջամտություն համարել, ինչպես կարծվում է[39], քանի որ դա պարզապես առաջարկ էր և ոչ թե միջամտություն։ Հայ եկեղեցու իրավական վիճակը և նրա իրավունքները որոշված էին պայմանագրերի միջոցով, ինչպես օրինակ, Սահակ կաթողիկոսի խառան ճանապարհորդելուց հետո հայ եկեղեցուն տրված հրովարտակ-պայմանագիրը[40] և ապա Հովհաննն Օձնեցու ստացած հրովարտակը[41], որոնց մեջ հավանաբար ձևակերպված էին նաև եկեղեցու հողատիրական իրավունքները։

Քաղաքացիական շատ իրավունքներից զիմմիների զուրկ լինելու պարագան ճնշում էր հասարակ ժողովրդին, ընդ որում, որոշ տարբերություն կար քաղաքային բնակչության և գյուղացիության միջև։

Հետաքրքրական են արաբ զորավարների կնքած պայմանագրերը Ասորիքի, Միջագետքի, Հայաստանի և Վրաստանի քաղաքների հետ։ Այս պայմանագրերը, թեև ունեն ընդհանրություններ, այսուհանդերձ ունեն նաև ամեն մի երկրին հատուկ կետեր, որոնք նույնպես կարևոր են տարբեր երկրների պատմության ուսումնասիրման համար, ընդ որում, Հայաստանի պատմության համար կարևոր նշանակություն ունեն Վերին Միջագետքի և վրացական քաղաքների հետ կնքված պայմանագրերը։

Վերին Միջագետքի Ռակկա քաղաքի բնակիչների հետ նվաճող զորավարի կնքած պայմանագրում ասվում է. «Սա տվեց Իյադ իբն Ղանմը Ռակկայի բնակիչներին [քաղաք] մտած օրը։ Նա տվեց նրանց ապահովություն, նրանց անձերի, ունեցվածքի և եկեղեցիների համար, որոնք չպետք է ավերվեն ոչ էլ բնակվեն, եթե միայն [բնակիչները] վճարեն իրենց վրա դրված գլխահարկը, չդավաճանեն, նոր եկեղեցի կամ [հրեական] տաճար չկառուցեն, զանգը [բարձր] չհնչեցնեն, զատիկը [ցուցադրաբար] չտոնեն և խաչը [դրսում] չցուցադրեն»[42]։

---

38 A. Fattal, նշվ. աշխ., էջ 215—216, M. Allard, Les chretiens a Baghdad („Arabica", t. IX, f. III, Paris, 1962, p. 382).

39 A. Fattal, նշվ. աշխ., էջ 223։

40 Ղևոնդ, էջ 31։

41 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 68։

42 Beladsori, p. 173.

Նման բովանդակություն ունի նաև Եդեսիայի հետ կնքված պայմանագիրը։ «Սա է Իյադ իբն Ղանմի գիրը Ռուհա (Եդեսիա) եպիսկոպոսին։ Դուք ինձ բացիք քաղաքի դուռը [այն պայմանով], որ ամեն մի մարդու համար վճարեք մեկ դինար, մեկ մոդի[43] ցորեն։ Դուք և ձեր հետևորդները ապահով եք ձեր անձերի, ունեցվածքի և տաճարների համար։ Պարտավոր եք ճանապարհ ցույց տալ մոլորված [մահմեդականին], կամուրջներ և ճանապարհներ նորոգել և խորհուրդներով [օգնել] մահմեդականներին»[44]։ Բալազորին հիշում է նաև մեկ այլ պայմանագիր, որ Իյադը տվել է նույն քաղաքի բնակիչներին. «Սա է Իյադ իբն Ղանմի և նրան ընկերակցող մահմեդականների դիրը Ռուհա (Եդեսիա) բնակիչներին առ այն, որ ապահով են իրենց արյան, ունեցվածքի, գավակների, կանանց, քաղաքի և ալրաղացների համար, եթե միայն կատարեն իրենց վրա դրված պարտավորությունները։ Մենք պահանջում ենք, որ նորոգեն մեր կամուրջները, և ճանապարհ ցույց տան մեր մոլորյալ [զինվորներին]»[45]։

Այս պայմանագրերում երաշխավորվում էր քաղաքների բնակչության անձի, ունեցվածքի, եկեղեցիների, ալրաղացների և քաղաքի պարիսպների ապահովությունը։

Հայաստանում նվաճող զորավար Հաբիբը պայմանագրեր կնքեց Դվինի ու Նախճավանի բնակիչների հետ։ Մեզ հասել է միայն Դվինի պայմանագիրը, իսկ Նախճավանինը՝ նույն բովանդակությունն է ունեցել։

Ահա Դվինի բնակիչներին Հաբիբի տված պայմանագիրը.

«Սա է Հաբիբ իբն Մասլամայի գիրը Դվինի բնակիչներին՝ քրիստոնյաներին, զրադաշտականներին և հրեաներին, ներկաներին ու բացականերին առ այն, որ երաշխավորում եմ ձեր անձերը, ունեցվածքը, եկեղեցիները, տաճարները և քաղաքի պարիսպները։ Դուք ապահովության մեջ եք, իսկ մենք պարտավոր ենք հաստատ մնալ [մեր պայմանին], ինչքան ժամանակ որ դուք հավատարիմ կմնաք և կվճարեք գլխահարկն (ջիզիա) ու հողահարկը (խարաջ)»[46]։

Տփղիս քաղաքի բնակիչներին Հաբիբի տված պայմանագիրը վերաբերում է ոչ միայն քաղաքին, այլև որոշում է գլխահարկի հետ կապված հարցերը.

«Սա է Հաբիբ իբն Մասլամայի գիրը Ջուրզան ալ-Կիրմիզ[47] [երկրի] Մանջալիս (Մանգլեաց) [գավառի] Տաֆլիս (Տփղիս) [քաղաքի] բնակիչներին երաշխավորելու նրանց անձերը, տաճարները, վանքերը, ծիսակատարությունները և կրոնի [ազատությունը] պայմանով, որ պարտավորությունը թեթև լինի և գլխահարկը (ջիզիա) գանձվի ամեն մի տնից (ծխից)[48] մեկ դինար։ Դուք չպետք է գլխահարկը թեթևացնելու նպատակով մի քանի տուն (ծուխ) իրար միացնեք, իսկ մենք չպետք է նրանց բաժանենք (մանրացնենք) ավելի մեծ [գլխահարկ] ստանալու նպատակով։ Դուք մեզ տալու եք ձեր խորհուրդները և

---

43 Ցորենի չափ՝ հավասար 9,792 կգ.։

44 Beladsori, p. 174.

45 Նույն տեղում։

46 Նույն տեղում, էջ 200, M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, S. 21—22.

47 Նույն պայմանագրի Թաբարու մոտ հիշված տարբերակում գրված է ալ-Հուրմուզ (Tabari, IV, p. 162).

48 ادهل بيت նշանակում է տան բնակիչներ, այսինքն գերդաստան կամ ծուխ։

օժանդակությունը Աստծո և նրա մարգարեի թշնամիների դեմ ինչքան որ կարող եք, պարտավոր եք մեկ գիշեր հյուրընկալել կարիք ունեցող մահմեդականին [սուրբ] Գրքի ժողովրդի օրինավոր համարած կերակրից։ Եթե որևէ մահմեդական ճանապարհին ձեզ մոտ իջևանի, պարտավոր եք նրան տանել ամենամոտ տեղում գտնվող մահմեդական [զորքի] մոտ, բացի այն պարագայից, եթե դա անկարելի է։ Եթե դուք դարձի գաք և [մահմեդականի] աղոթք կատարեք՝ մեր եղբայրներն եք կրոնի մեջ, ապա թե ոչ գլխահարկը կծանրանա ձեզ վրա։ Եթե որևէ գործ մահմեդականներին ստիպի ձեզանից հեռանալ և ձեր թշնամին նեղի ձեզ, ապա մեղավոր չենք և այս բանը անվավեր չի դարձնի ձեր պայմանագիրը։ Ահավասիկ ձեր իրավունքները և ձեր պարտավորությունները»[49]։

Արմինիայի ոստիկան Ջառռահ իբն Աբդալլահը VIII դ. 20-ական թվականներին Տփղիսի բնակիչներին տվեց նոր պայմանագիր։

«Սա է ալ-Ջառռահ իբն Աբդալլահի գիրը Ջուրզան (Վրաց) նահանգի Մանջալիս (Մանգլիս) գավառի Տաֆլիս (Տփղիս քաղաքի) բնակիչներին. ինձ բերեցին Հաբիբ իբն Մասլամայի կողմից իրենց տրված ապահովության գիրը այն մասին, որ քիչ գլխահարկ են վճարելու և որ նա հաշտության [պայմանագիր] էր կնքել նրանց հողերի, որթատունկերի և ալրաղացների համար, որոնք կոչվում են Առարի (Վերա) և Սարինա Մանջալիս գավառից և Թաամ (Դիգոմի), Դիդունա (Դիդուբե), Ջուրզան նահանգի Կհուիթ (Խվեթի)[50] գավառից այն պայմանով, որ վճարեն այդ ալրաղացների և որթատունկերի համար տարեկան հարյուր դիրհեմ առանց կրկնության (մեկ անգամից)։ Հաստատեցի նրանց ապահովության գիրը և հաշտության պայմանագիրը ու հրամայեցի, որ չավելացվի [հարկը]։ Ով կարդա իմ գիրը, թող զանց չառնի այն»[51]։

Այս պայմանագիրը բացառիկ արժեք ունի նրանով, որ խալիֆայության մեզ հասած պայմանագրերը մեծ մասամբ VII դ. կեսերին են վերաբերում։ VIII դ. տրված այս պայմանագիրը ցույց է տալիս, թե ինչքան կայուն էր պայմանագրեր տալու սովորությունը։

Բոլոր այս պայմանագրերը երաշխավորում են զիմմի քաղաքային բնակչության անձի, գույքի, եկեղեցիների, պարիսպների, ալրաղացների ապահովությունը։ Սակայն միշտ չէ, որ խալիֆայությունը երաշխավորում էր բնակիչների բոլոր իրավունքները։ Ընդհանրապես նվաճումից հետո արաբներն իրավունք ունեին բնակվելու գրավված քաղաքներում և երբեմն այս բանն ուղղակի նշվում էր պայմանագրում (օրինակ Հոմսի՝ Եմեսայի պայմանագրում)[52]։ Կարինը (Թեոդուպոլիս) նվաճվեց սրով և թեև բնակիչները խնդրեցին ապահովության գիր, սակայն պատմիչը չի ասում, թե արդյոք Հաբիբ զորավարը տվեց այն, թե ոչ[53]։ Նա միայն նշում է, որ քաղաքի բնակիչների մի մասը իր խնդրանքով դուրս եկավ քաղաքից և գնաց Բյուզանդիա, իսկ նրանց փոխարեն բերվեցին արաբ վերաբնակիչներ, որոնց տրվեցին որոշ իրավունքներ։ Հետագայում,

---

49 Beladsori, p. 201—202, M. Ghazarian, նշվ. աշխ., էջ 22—24։

50 Այս տեղանունների ճշտման մասին տե՛ս Э. Снхарулидзе, Из истории арабо-грузинских отношений. Арабские охранные грамоты («Труды Тбилисского госуниверситета», т. 73, 1959, стр. 167—181).

51 Beladsori, p. 202.

52 Նույն տեղում, էջ 131։

53 Նույն տեղում, էջ 197։

երբ Աբբասյան Մանսուր խալիֆան վերակառուցեց պատերազմի ժամանակ վնասված քաղաքը, այնտեղ նորից արաբների վերաբնակեցրեց և հայ բնակիչներին պարտավորեցրեց հոգալ նրանց պարենը[54]։

Խոսելով քաղաքային քրիստոնյա բնակչության հարկեր վճարելու պարտավորության մասին, Աբու Յուսուֆը նշում է, որ նրանք գլխահարկը պետք է վճարեն հետևյալ ձևով. «Ինչ վերաբերում է մեծ քաղաքներին, ինչպես Մադինատ ալ-Սալամը (Բաղդատ), Քուֆան, Բասրան և նրանց նմանները, ապա իմ կարծիքով իմամը (խալիֆան) պետք է ամեն մի մեծ քաղաքի համար նշանակի առաքինի ու պատվավոր մարդու, որի աստվածավախության և պարկեշտության վրա կարելի է վստահել և տա նրան օգնականներ, որոնք նրա մոտ կհավաքեն այլևայլ կրոնների հետևորդներին՝ հրեաներին, քրիստոնյաներին, զրադաշտականներին, սարիներին և սամարացիներին ու նրանցից կգանձվի ինչպես ասել եմ, ըստ խմբերի.

Քառասունութ դիրհեմ հարուստներից, ինչպես դրամափոխից (الصيرفى), կտորեղենի վաճառականից (البزاز), կալվածատերից (صاحب الضيعة), վաճառականից (التاجر) և բժշկից[55]։ Ով որ մասնագիտություն[56] կամ առևտուր ունի, որով ապրում է, ապա ամեն մի մասնագիտությամբ կամ առևտրով զբաղվողից ըստ նրա մասնագիտության և առևտրի կգանձվի քառասունութ դիրհեմ հարուստից, քսանչորս դիրհեմ միջին կարողության տեր մարդուց։ (Այսպիսով), ում որ արհեստը հնարավորություն է տալիս քառասունութ դիրհեմ վճարել, նրանից կվերցվի այդ գումարը, իսկ ով որ հնարավորություն ունի միայն քսանչորս դիրհեմ վճարելու, ապա նրանից այդքան կգանձվի։ Եվ տասներկու դիրհեմ կգանձվի ձեռքով աշխատող գործավորից (العامل بيده), ինչպես դերձակից (الخياط), ներկարարից (الصباغ), հնակարկատից (الاسكاف), կոշկակարից (الخراز) և նմաններից։

Երբ գլխահարկը հավաքվի վերակացուների մոտ, ապա նրանք կտանեն [արքունի] գանձարան (بيت المال)»[57]։

Մահմեդական իրավագիտությունը որոշել էր նաև զիմմի բնակչության իրավունքները տնտեսական կյանքի տարբեր ասպարեզներում։ Զիմմին կարող էր առևտուր անել, պայմանագիր կնքել, մահմեդականին վարձել որևէ աշխատանքի՝ բացի գինու պատրաստման կամ վաճառքի համար աշխատեցնելուց։ Խոզի և գինու վաճառքը թույլատրելի էր միայն զիմմիների մեջ։ Որպես առևտրական մաքս, օտարը վճարում էր տասանորդ, զիմմին վճարում էր կես տասանորդ, իսկ մահմեդականը՝ քառորդ տասանորդ[58]։ 200 դիրհեմից (20 դինար) պակաս արժեք ունեցող ապրանքի համար ոչինչ չէր վճարվում[59]։

---

54 Ղևոնդ, էջ 130։

55 Բառացի՝ բուժող բժշկից։

56 Բնագրում՝ արհեստ։

57 Abu Yusuf, p. 70—71.

58 A. Fattal, նշվ. աշխ, էջ 155. Այս դեպքում զրադաշտականը օտարի նման վճարում էր մեկ տասանորդ։

59 Abu Yusuf, p. 70.

Զիմմին գրեթե ամեն տեսակ մասնագիտություն կարող էր ունենալ՝ քարտուղար, բժիշկ, վաճառական, դրամափոխ և այլն։ Մահմեդական իրավունքը տեսականորեն արգելում է վաշխառությունը, բայց զիմմիների մեջ դա թույլատրվում էր (իրականում մահմեդականներն էլ էին դիմում վաշխառուների)։ Վաշխառությունը զարգացած էր, օրինակ, Վերին Միջագետքում[60]։

Մահմեդական իրավագետները տարբեր կարծիքներ ունեն զիմմիների տեղափոխման կամ բնակության իրավունքների մասին։ Նրանց մեծ մասի կարծիքով ոչ մահմեդականն իրավունք չուներ ապրելու Արաբիայում կամ քաղաքների մահմեդական թաղամասերում, ինչպես նաև չէր կարող մզկիթ հաճախել[61]։ Սակայն հանիֆիները դրանք համարում են թույլատրելի[62]։

Զիմմիի իրավականորեն անհավասար ծանր վիճակը ճնշում էր առաջին հերթին գյուղացիությանը[63]։ Թե ինչպիսի ձգտումներ են ունեցել նվաճողները քրիստոնյա երկրների գյուղացիության և ազգաբնակչության այլ խավերի նկատմամբ, երևում է հետևյալից. Ասորիքի նվաճման ժամանակ զորավար Աբու Ուբայդան խալիֆա Օմարին հայտնում է, որ զորքը ցանկություն ունի ստրկացնել ամբողջ քրիստոնյա ազգաբնակչությանը և նրանց ունեցվածքը որպես ավար բաժանել զորականների միջև։ Խալիֆան պատասխանում է, որ եթե նման քայլի դիմենք, ապա ո՞վ պետք է աշխատի մեզ համար[64]։ Այսպիսով, զիմմի գյուղացիությունը պետք է մնար նյութական բարիքներ արտադրող տարր[66]։ Գյուղացիությունը ճնշված էր անտանելի հարկերի ծանրության տակ։ Առանձնապես ծանր էր գլխահարկը, որը միայն ոչ մահմեդականները պիտի վճարեին։ «Գլխահարկը վճարում են միայն տղամարդիկ և ոչ կանայք ու երեխաները։ Դրա չափն է քառասունութ դիրհեմ հարուստներից, քսանչորս դիրհեմ միջին կարողության տեր մարդկանցից, իսկ կարիքավոր հողագործներից (الحراث), որոնք սեփական ձեռքերով են աշխատում՝ տասներկու դիրհեմ»[66]։

Խալիֆայությունը խստորեն հետևում էր, որ հարկահավաքները գյուղապետերի հետ համաձայնության մեջ չմտնեին հարկերի վճարման հարցում[67]։

Հայկական աղբյուրներում գլխահարկը հատուկ անուն չունի և ընդհանուր ձևով կոչվում է «հարկ» կամ «ըստ գլխոյ», «հարկ արքունի», «սակ արծաթոյն»։ Ղևոնդ պատմիչը նկարագրում է, թե ինչպիսի ծանր վիճակ էր ստեղծվել երկրում Աբբասյանների օրոք՝ ծանր հարկերի պատճառով։ Մանսուր խալիֆայի օրոք, երբ հարկերը կանխիկ դրամով էին պահանջում (և ոչ բնահարկ), Հայաս-

---

60 „Chronique de Denys de Tell Mahre", Paris, 1895, p. 93.

61 H. Lammens, L'Islam, Beyrouth, 1941, p. 82—84.

62 A. Fattal, նշվ. աշխ., էջ 95—96։

63 Զիմմիների իրավական վիճակի նույն պատկերն է տալիս նաև շիա իրավագիտությունը („Droit musulman. Receuil des lois concernant les musulmans schyites, par A. Querry", Paris, 1871, t. 1, p. 338).

64 Abu Yusuf, p. 82.

65 Արու Յուսուֆի աշխատության վրա հայագիտության մեջ առաջինը ուշադրություն է դարձրել Հ. Զորյանը, Արու Յուսուֆի հողային հարկի գիրքը («Տեղեկագիր պատմության և գրականության ինստիտուտի», 1937, № 2)։

66 Abu Yusuf, p. 69, „Yahia Ibn Adam's Kitab al-kharadj" (Ben Shemesh Taxation in Islam, Leiden, 1958, p. 57—58).

67 Abu Yusuf, p. 71.

տանում արծաթ դրամ չէր գտնվում, որպեսզի գյուղացին վճարի հարկը[68]։ Հարկերը բռնությամբ գանձելու դեպքում հարկահանները կապարե կնիքով խարազանում էին գյուղացու ծոծրակը[69], մի բան, որ հատկապես խիստ կիրառվում էր առաջին Աբբասյանների օրոք։

Հայ (և ընդհանրապես զիմմի) գյուղացու վճարած կարևոր հարկերից էր խարաջը (հողահարկ)։ Թեև մահմեդականները որոշ դեպքերում խարաջի փոխարեն վճարում էին տասանորդ, սակայն զիմմի գյուղացիությունը բոլոր դեպքերում պիտի վճարեր խարաջ, որը երբեմն հասնում էր մինչև բերքի կեսին։

Գյուղացու իրավական վիճակի մասին մահմեդական իրավագիտության մեջ դժվար է հստակ ձևակերպումներ գտնել։ Տեսականորեն մահմեդական գյուղացին նույն իրավական վիճակն ուներ, ինչ որ մահմեդական վերնախավը։ Զիմմին ևս լիներ գյուղացի, թե հողատեր իշխան, նույն իրավական վիճակն ուներ։ Բանն այն է, որ գյուղացիությունն ընդհանրապես բաղկացած էր ոչ մահմեդականներից, ուստի այն ձևակերպումները, որ վերաբերում են զիմմիներին, ինչ որ չափով կարելի է ընդհանրապես գյուղացիությանը վերաբերող ձևակերպումներ համարել։ Գյուղացու կախման մասին կարելի է անուղղակի տվյալներ գտնել միայն պատմիչների մոտ, քանի որ իրավագետներն այս հարցում քիչ են օգնում։

Խոսելով գյուղացիների մասին, Աբու Յուսուֆն օգտագործում է «գյուղերի բնակիչներ» (اهل القرى) ընդհանուր արտահայտությունը, սակայն նա (ինչպես նաև այլ մատենագիրներ) ոչ արաբ, այսինքն նվաճված երկրի գյուղացուն հատուկ արհամարհական արտահայտությամբ կոչում է «ուլուջ» (علوج), որը նշանակում է ոչ արաբ, կոպիտ մարդ։ Այդ արտահայտությունն օգտագործում է նաև Բալազուրին հայ գյուղացու համար։ Այսպես օրինակ, նա ուլուջ է անվանում 851 թ. Յուսուֆ ոստիկանի դեմ ապստամբած հայ լեռնական գեղջուկներին[70]։

Գլխահարկը չվճարելու դեպքում զիմմի գյուղացուն տանջում էին՝ կանգնեցնելով արևի տակ։ Այս բանին Աբու Յուսուֆը դեմ է, սակայն գտնում է, որ հարկը չվճարելու դեպքում գյուղացին պետք է բանտարկվի։ Ենթադրվում է, որ զիմմի գյուղացուն նման դեպքում նույնիսկ ստրկացնում էին։

Մահմեդական իրավունքը մանրամասն շարադրում է ստրուկի իրավական վիճակը։ Մահմեդական և զիմմի ստրուկների միջև ևս տարբերություն կար։ Մահմեդական ստրուկը ըստ շարիաթի, կարող էր ազատագրվել (عتق), իսկ ոչ մահմեդականը՝ չէր կարող։ Միայն հանիֆի դպրոցին պատկանող իրավագետներն էին գտնում, որ կարելի է նաև զիմմի ստրուկին ազատ արձակել։

Պաշտոնապես զիմմին չէր կարող ստրկացվել, սակայն եթե նա խախտում էր պայմանագիրը և այլևս զիմմա (հովանավորություն) չէր վայելում, նրան կարելի էր ստրկացնել։ Իբն Հաուկալը հատկապես նշում է, որ Բաղդադի շուկաներում չկար հայ ստրուկների վաճառք[71]։ Սակայն որևէ ապստամբության դեպքում, երբ հայը զիմմի իրավական վիճակը կորցրած էր համարվում, կա-

68 Ղևոնդ, էջ 135։
69 Նույն տեղում, էջ 127։
70 Beladsori, p. 201, 221.
71 „Opus Geographicum auctore Ibn Hauqal", II, Lugd. Bat., 1938, p. 343.

րող էր ստրկացվել։ Բոլոր ապստամբությունների ժամանակ շարժումը ճնշելուց հետո մեծ թվով հայեր դերի էին տարվում և ստրկացվում։ Ըստ Բալաղուրու 850—852 թթ. ապստամբությունը ճնշող Բուղան խութեցիներին «մեծ թվով գերեվարեց»[72], Քրիստոնյան չէր կարող ունենալ մահմեդական ստրուկ և եթե իր քրիստոնյա ստրուկը մահմեդականություն ընդուներ, նա պարտավոր էր նրան վաճառելով հեռացնել իրենից[73]։

Քրիստոնյա ժողովուրդների իրավականորեն անհավասար դրությունը հատկապես երևում էր մահմեդական դատարանում[74]։ Քրիստոնյան իրավունք չուներ մահմեդական դատարանում վկայություն տալու և միայն բացառիկ դեպքերում էր (մահմեդական վկաների բացարձակ չգոյություն) նրան թույլ տրվում (ըստ հանիֆիների) վկայություն տալ։ Ոճրագործության դեպքում մահմեդականը կարող էր վայելել դատարանի պաշտպանությունը, օրինակ, եթե քրիստոնյան տպաներ մահմեդականին, խիստ պատժի կենթարկվեր, իսկ եթե մահմեդականը նրան սպաներ, դատարանը չնչին պատիժ կտար[75]։

Թեև քրիստոնեական համայնքները ընտանեկան իրավունքի հարցերում առաջնորդվում էին իրենց եկեղեցական կանոններով, այսուհանդերձ, երբ հարցը վերաբերում էր քրիստոնյայի ու մահմեդականի ամուսնության հարցերին, ապա մահմեդական իրավունքը միջամտում էր։ Մահմեդական տղամարդը[76] իրավունք ուներ ամուսնանալու քրիստոնյա կնոջ հետ (եթե նա ստրկուհի չէր)։ Սակայն քրիստոնյա տղամարդն իրավունք չուներ մահմեդական կնոջ հետ ամուսնանալու։ Եթե կողմերից որևէ մեկը մահմեդականություն ընդուներ, զավակները մահմեդական էին համարվում[77]։ Բոլոր դեպքերում (մանավանդ ժառանգության հարցում)[78] ընտանիքի այն անդամը, որ մահմեդականություն էր ընդունում, մյուսների նկատմամբ առավել իրավունքներ էր վայելում։

Նման անիրավահավասարության պայմաններում քրիստոնյա ժողովուրդների համար կենսական նշանակություն ուներ այն, որ ունեին իրենց համայնքային ներքին կազմակերպությունը և եկեղեցական կանոնագրքերը։ Հայկական Կանոնագիրքը և նրանով առաջնորդվող հայկական եկեղեցական դատարանի առկայությունը հայ ժողովրդի համար անհավասարության ճնշող մթնոլորտում մասամբ տանելի վիճակ ստեղծելու կարևոր միջոց էին։

---

72 Beladsori, p. 212.

73 A. Fattal, նշվ. աշխ., էջ 144։

74 Նույն տեղում, J. Schacht, The origins of muhammadan jurisprudence, Oxford, 1950, p. 210.

75 Մահմեդական կնոջ սպանության դեպքում վճարվում էր մահմեդական տղամարդու սպանության համար վճարված արյան գնի կեսը, քրիստոնյայի և հրեայի սպանության համար վերջինիս մեկ երրորդը, իսկ զրադաշտականի սպանության համար՝ մեկ տասնհինգերորդը, տե՛ս E. Sachau, Muhammedanisches Recht, nach Schafiitischen Lehre, Stuttgart-Berlin, 1897, S. 763—764, 786—787.

76 Ըստ երևույթին Հայաստանում լինում էին նման ամուսնություններ, քանի որ 768 թ. Պարտավի ժողովը հատկապես նշում էր. «Քահանայք պատուէր արասցեն արանց և կանանց և դստերաց նոցա զի ոչ արասցեն ընդ հեթանոսի զուգութիւն զի չէ ամուսնութիւն այլ անաւրէն և պիղծ խառնակութիւնք» («Կանոնագիրք Հայոց», հ. Բ, Երևան, 1971, էջ 10 (կանոն ԺԱ)։

77 Tritton, նշվ. աշխ., էջ 188։

78 Քրիստոնյայի ժառանգության մասին տես L. W. C. Van den Berg, նշվ. աշխ., էջ 141։

Զիմմիների իրավական վիճակը մինչև VIII դ. կեսը, ընդհանրապես փոփոխության չենթարկվեց։ Սակայն VIII դ. խալիֆայության ամրապնդմանը զուգընթաց զիմմիների որոշ իրավունքներն անհանդուրժելի էին համարվում։ Օման Բ Օմայան խալիֆային է վերադրվում այն որոշումը, ըստ որի բոլոր քրիստոնյա պաշտոնյաները պետք է հեռացվեին պետական պաշտոններից[79] և որ նրանք պարտավոր էին հագուստի վրա նվաստացուցիչ տարբերանշաններ կրել։

Սակայն զիմմիների նկատմամբ այս նոր քաղաքականությունն ըստ էության գործադրվեց միայն Աբբասյանների օրոք։ Աբբասյանների պետությունը համամահմեդական բնույթ ուներ և մահմեդականների բացառիկ իրավունքներ վայելելը հատկապես ընդգծված լինելով, շեշտվեց նաև զիմմիների անիրավահավասար վիճակը։ Զիմմիների իրավական վիճակի այս երկու շրջանը (Օմայանների և Աբբասյանների օրոք), իրավագետ Մավարդիի մոտ տրված է որպես երկու տեսակ պարտավորություն (պարտադիր և ոչ պարտադիր), առանց նշելու, որ դրանք մեծ մասամբ տարբեր ժամանակների արտահայտությունն էին[80]։ Պարտավորությունների առաջին խմբում նշված էին պետության շահերից բխող պահանջներ՝ լինել հարգալիր Ղուրանի, մարգարեի և մահմեդական կրոնի նկատմամբ, մահմեդականին չհամոզել կրոնափոխ լինել և մանավանդ չօգնել խալիֆայության թշնամիներին։ Պարտավորությունների երկրորդ խումբը (հագուստի, կենցաղի տարբերիչ նշաններ) ևս, որը շեշտվեց հատկապես Հարուն ալ Ռաշիդ և Մուտավաքքիլ խալիֆաների օրոք, նպատակ ուներ նվաստացնել ու ճնշել զիմմիներին։

Քրիստոնյաների հագուստին վերաբերող սահմանափակումները Աբբասյանների օրոք ձևակերպված խստություններ էին, սակայն բոլոր դեպքերում դրանք վերագրվում էին նախորդ շրջանի խալիֆաներին[81]։

Իրավական զիմմի կոչված վիճակը, որը հայ ժողովրդին զրկել էր քաղաքացիական շատ իրավունքներից, մեծ վնաս հասցրեց նրան VIII դ. և IX դ. առաջին կեսում։ Միայն հայկական անկախ պետականության՝ Բագրատունյաց թագավորության վերականգնումը (IX—XI դդ.), հետագայում Կիլիկիայի Հայկական թագավորության ու Հյուսիսային Հայաստանում Զաքարյան իշխանապետության առաջացումը հնարավորություն տվեցին ազատվելու այս վիճակից։ Սակայն XIV դ. զիմմի գոյավիճակը վերջնականապես ծանրացավ հայ ժողովրդի վրա և սա տևեց մինչև XVIII դ., ենթարկվելով, իհարկե, որոշ փոփոխությունների, սակայն բոլոր դեպքերում մնում էր հիմնականը՝ զիմմիի անհավասար վիճակը, որը կաշկանդում էր հայ ժողովրդի բնականոն զարգացումը։

ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА ПОД ВЛАДЫЧЕСТВОМ ХАЛИФАТА

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

Резюме

В правовом отношении армяне входили в ту группу народов халифата, которые в мусульманской юриспруденции (фикх) назывались зиммн (ахл аз-зимма).

[79] A. Atiya, նշվ. աշխ., էջ 268—271։

[80] Mavcrdi, p. 250—251.

[81] Ph. Hitti, History of Syria, London, 1951, p. 542—544. Abu Yusuf, p. 73.

В принципе зимми имели гораздо меньше прав, чем мусульманское население халифата. Это касалось и государственного права, а также уголовного и гражданского. В действительности же многое зависело от отношения халифов, наместников и правителей к этим подчиненным народам и от политической обстановки в стране.

Кроме того, существовала разница в правовом положении разных подчиненных народов. Сирийцы и копты регулярно не участвовали в управлении Сирией или Египтом. В Армении правителями страны оставались армянские «ишханы». В результате упорного сопротивления продолжала существовать армянская конница со спарапетом войск Армении. Армянские феодалы приложили огромные усилия, чтобы сохранить право наследственного землевладения.

Положение зимми причинило большой ущерб всем подчиненным христианским народам халифата, затормозив их нормальное развитие.